ՎՐԱՍՏԱՆ

«ՅԱՆԱՍՏԱՆ» (ՆԱՀԱՐԱՊԱՏԱԿ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 85 - 86 (16990) ՇԱԲԱԹ 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅՍՕՐ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, 5 ԻՆՔՆԱՎԱՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՎ 15 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ ԿԱԶՄՈՒՄ Է 2 ՄԻԼԻՈՆ 88 ՀԱԶԱՐ 722 ՄԱՐԴ



Այսօր՝ հոկտեմբերի 30-ին, անցկացվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության երկրորդ փուլը:

Այն անցկացվում է 5 ինքնակառավարվող քաղաքներում (Թբիլիսի, Բաթումի, Քութայիսի, Ռուսթավի, Փոթի), 15 մունիցիպալիտետներում եւ 24 ընտրատարածքներում: Ընտրողների ընդհանուր թիվը 2 միլիոն 88 հազար 722 է, այդ թվում՝ Թբիլիսիում ընտրողների թիվը կազմում է 1 մլն 2 հազար 525 քաղաքացի՝ 41 հազար 314 ընտրող, որ գրանցված են Կրծանիսիի ընտրատարածքում, ընտրություններին կմասնակցեն էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառմամբ: Առաջին փուլում տարիքային անհամապատասխանության ու մինչեւ երկրորդ փուլը տարիքը լրացած քաղաքացիների թիվը կազմում է 2069:

Հոկտեմբերի 30-ին վերոնշյալ ընտրատարածքներում Վրաստանի քաղաքացիներն ընտրելու են 20 քաղաքապետերի եւ սակրեբուլոյի 42 մեծամասնական պատգամավորների:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԲԱՁՄԱՀԱԶԱՐԱՆՈՑ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎՈՒՄ ԷԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՇՈՏ ԾՐՋԱՆՆԵՐԻՑ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻՑ, ԾԱԼԿԱՅԻՑ, ԲՈԼՆԻՍԻՑ, ՄԱՌՆԵՈՒԼԻՑ, ԹԵԹՐԻԾՂԱՐՈՑԻՑ ԺԱՄԱՆԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ



Հոկտեմբերի 27-ին Թբիլիսիում, Ազատության հրապարակում անցկացվեց «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության նախընտրական ամփոփիչ հանրահավաքը: Երկրի տարբեր տարածաշրջաններից ժամանած մասնակիցների թվում էին նաեւ Վրաստանի հայահոծ շրջաններից՝ Ախալքալաքից, Նինոծմինդայից, Ծալկայից, Ասպինձայից, Բոլնիսիից, Մառնեուլիից, Թեթրիծղարոյից եւ այլ մունիցիպալիտետներից ժամանած ակտիվիստներ:


Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների երկրորդ փուլի նախօրեին կազմակերպված հանրահավաքին ելույթ ունեցան «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, Վրաստանի վաչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Կախա Կուճավան, «Վրացական երազանքից» Թբիլիսիի եւ Ռուսթավիի քաղաքապետերի թեկնածուներ Կախա

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

«ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, «ՎՐԱՍՏԱՆ»

Ջերմորեն շնորհավորում եմ մեր գործընկերներին, ում հետ հարեւանությամբ շուրջ քառասուն տարի աշխատեցինք Կոստավայի 14 համարի «Սամշոբլո» հրատարակչության շենքում, մինչեւ 2007 թվականը, երբ Սաակաշվիլու իշխանության օրոք մեզ, շուրջ վեց տասնյակ խմբագրությունների մեր «տանից» դուրս չշպրտեցին...


ԹԵՆԳԻԶ ԳԱՉԵՉԻԼԱՉԵ

Միեւնույն շենքում աշխատելու ժամանակ «Լելո» եւ «Վրաստան» թերթերի խմբագրությունները հաճախ էին իրար հետ փոխանակում տեղեկատվությունը, միմյանց լրացնում, աջակցում: Եվ այդ համագործակցությունը շարունակվեց նաեւ 2007 թվականից հետո, երբ ստիպված եղանք փոխել խմբագրությունների գտնվելու վայրերը:

Անցած 100 տարիների ընթացքում, «Վրաստանը» նշանակալի դեր է կատարել մեր ընդհանուր հայրենիքի շինարարության, երկու եղբայրական

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԻՇՏ ԱՆՀԱՄԲԵՐ ՍՊԱՍՈՒՄ ԵՄ «ՎՐԱՍՏԱՆԻ» ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՐԻՆ


ՍԱՆԴՈՒԽՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Իմ շատ սիրելի «Վրաստանը» դարձավ 100 տարեկան:

Իմ 82 տարիների ընթացքում, որքան հիշում եմ, մեր ընտանիքը Ծալկայի շրջանի Ղուշչի գյուղում ամեն տարի բաժանորդագրվել է այն օրերի «Սովետական Վրաստան» (այժմ՝ «Վրաստան») թերթին: Պարբերականին հարգանքով վերաբերվելու, տպագրվող նյութերը ընթերցելու նկատմամբ սերը ներարկել էր տատս, իսկ հետո, դպրոցում սովորելիս, ապա՝ Ղուշչիում ակումբավարուհի, գրադարանավարուհի աշխատելու տարիներիս, ինքս դարձա թերթի բաժանորդագրողն ու բաժանորդագիրը: Եվ այդպես՝ տարիներ շարունակ:

Հիշում եմ մեր համագյուղացիների շրջանում ինչ արծագանք էր ունենում թերթի թղթակցի այցելությունը մեր գյուղ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՏԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԲԱԺՈՒՄԸ ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ»



Հոկտեմբերի 25-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ելույթ ունենալով Հայաստանի Ազգային ժողովում, անդրադաձավ տարածաշրջանի տնտեսական ու տրանսպորտային կապերի ապաշրջափակման հարցով ստեղծված Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի փոխվարչապետերի գլխավորությամբ եռակողմ աշխատանքային խմբի հանձնարարականների թեմային: Նա նշեց, որ տարածաշրջանի տնտեսական ու տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակումը կարող է որակապես փոխել Հայաստանի տնտեսության բովանդակությունը եւ կառուցվածքը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

COVID - 19

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԻՐԱՎԻՃԱԿԸ ՏԱԳՆԱՊԱԼԻ Է, ԹԵԵՎ, ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱՊԵՏ, ԹՈՒՅԼ ՉԵՄ ՏԱ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ»



Հոկտեմբերի 24-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց համավարակային իրավիճակը:

Մտահոգության թեմա դարձավ հատկապես վերջին ժամանակներում երկրում վարակվածների, ինչպես նաեւ մահացության թվի ավելացումը: Նշվեց, որ երկրի ողջ տարածքում նվազել է պատվաստումների օրական ցուցանիշը, ինչը բացասաբար է անդրադառնում կորոնավիրուսի վարակի տարածման կանխարգելման գործընթացի վրա: Նիստում քննարկվեցին պատվաստումների ակտիվացման, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողության խստացման հարցեր: Ներկայացվեցին առաջարկություններ համավարակի պայմաններում որոշ սահմանափակումների, ինչպես նաեւ պարտադիր պատվաստման ներդրման վերաբերյալ:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՁԵ. «ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԷ»

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ Է, ԻՍԿ ԱՄԵՆԱՑԱԾՐԸ՝ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ ԵՎ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 18-ից Վրաստանի տարածաշրջաններում մեկնարկեց կորոնավիրուսի դեմ պատվաստման մարաթոնը: Վերջին շրջաններում հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի բժիշկներն ու տարածաշրջաններում կոնկրետ բնակավայրեր տեղի բուժաշխատողներն իրենց այցելություններով փորձելու են խրախուսել պատվաստման գործընթացը շրջաններում եւ գյուղերում:

Ինչպես նշեց հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն, պատվաստումների իրազեկման ու խրախուսման նպատակով անցկացվող մարաթոնի շրջանակներում իրականացվել է 1401 պատվաստում, որը բավարար համարել չի կարելի:

Ամիրան Գամղրելիձեի խոսքով, Վրաստանում պատվաստումների մակարդակը բավական ընկել է, եւ եթե օգոստոսին ու սեպտեմբերի սկզբին օրական 15-20 հազար պատվաստում էր արվում, ապա այժմ առավելագույնը 5000-ի է հասնում օրական պատվաստումների թիվը: Ըստ Գամղրելիձեի, առկա վիճակագրության համաձայն, պատվաստումների ամենաբարձր ցուցանիշը Թբիլիսիում է, ամենացածրը՝ Քվեմո Քարթլիում ու Սամցխե-Ջավախեթիում, ուստի տեղեկատվական արշավ է նախատեսվում նաեւ այդ վայրերում:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՎԵԼԱՑԱՎ 13-ՈՎ

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, արդեն երկրորդ տարին է՝ Թբիլիսին միայն խորհրդանշորեն է տոնում իր «Թբիլիսոբա» ավանդական տոնը:



Այս տարի էլ սովորաբար անցկացվող տոնական միջոցառումները սահմանափակվեցին միայն Թբիլիսիի պատվավոր քաղաքացիների պարգեւատրման արարողությամբ: Հանդիսավոր միջոցառումն անցկացվեց Թբիլիսիի սակրեբուլոյի շենքում: Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն Թբիլիսիի պատվավոր քաղաքացու կոչում շնորհեց վրաց գիտնական, բանասեր, Վրաստանի ազգային ակադեմիայի անդամ, ակադեմիկոս Ռիսմագ Գորդեզիանուն, բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ակակի Նադարեիշվիլուն, բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Իրակլի Փավլենիշվիլուն, բժիշկ-էնդոկրինոլոգ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Ռամազ Ղուրաշվիլուն, լուսանկարիչ եւ բռնքամարտիկ Դավիթ Կվաճաձեին, քաղաքի մաքրման ծառայության, մարդկային ռեսուրսների կառավարման ծառայության գլխավոր մասնագետ Լիլի Կինծուրաշվիլուն, ճանաչված դերասան, Վրաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամ էլգուջա Բուրդուլիին, ֆիզիկոս, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, միջուկային էներգիայի հարցերով համաշխարհային ճանաչման արժանացած գիտնական Պաատա Կերվալիշվիլուն, լեզվի ու գրականության մասնագետ, տերմինաբան Ինգա Ջիբուտիին, գրող, բանաստեղծ եւ վերլուծաբան, Իլիա Ճավճավաձեի, Նիկոլ Նիկոլաձեի, Գալակտիոն Տաբիձեի մրցանակների դափնեկիր Բադրի Քութաթելաձեին, թատերագետ եւ լրագրող Գրիգոլ Չիգոգիձեին, պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, ակադեմիկոս, 180 գիտական աշխատությունների հեղինակ Դավիթ Մուսխելիշվիլուն եւ մասնագիտությամբ՝ փականագործ Գիվի Ղամբաշիձեին:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԺՆԵՎՅԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՓՈՒԼԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-8-Ը

Ժնեւում անցկացվեց Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկխոսության թվով 54-րդ փուլի հանդիպումը:

Այդ բացառիկ հարթակով հերթական 54-րդ փուլն ավարտվեց անարդյունք: Կողմերը հերթական անգամ միմյանց մեղադրեցին ձեռքբերված պայմանավորվածությունների խախտման մեջ, թեպետ համաձայնվեցին շարունակել երկխոսությունը: Փոխադարձ համաձայնությամբ, որոշում է ընդունվել երկխոսության հերթական փուլն անցկացնել ընթացիկ տարվա դեկտեմբերի 7-8-ը:

Հիշեցնենք, որ ժնեւի բանակցություններն անցկացվում են Վրաստանի, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի մասնակցությամբ, Եվրամիության, ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի համանախագահությամբ: Երկխոսության աշխատանքային խմբերի աշխատանքին մասնակցում են նաեւ Աբխազիայի եւ, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի դե-ֆակտո իշխանության ներկայացուցիչները, ինչպես նաեւ Աբխազիայի Ինքնավար Հանրապետության օրինական կառավարության նախագահը:

ԴԱՏԱԿԱՆ

ՈՉ ՄԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՉԻ ՕԳՏՎԻ. ՍԱԿԱՇՎԻԼԻՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ ՉԷ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 1-ին թբիլիսյան բնակարաններից մեկում ձերբակալված Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլին Ռուսթավիի քրեական տարողական հաստատությունում ի նշան բողոքի հացադուլ է հայտարարել:



Եվրախորհրդարանի մի քանի պատգամավորներ, մի շարք հասարակական եւ քաղաքական կազմակերպություններ, որոնք հանդես էին գալիս Միխեիլ Սաակաշվիլու ազատ արձակման պահանջով, ներկայումս իշխանություններին ներկայացնում են 28-օրյա հացադուլից հետո առողջական հիմնախնդիրներ ունեցող Միխեիլ Սաակաշվիլուն քաղաքային հիվանդանոց տեղափոխելու պահանջը:

Ի պատասխան դրա, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ ոչ ոք նրան չի ստիպում հացադուլ անել, եւ ոչ մի բանտարկյալի համար հատուկ ատոնություններ չեն սահմանվի:

- Ո՞վ է նրան խանգարում ուտել, ինչո՞ւ է նա հացադուլ անում, ես ուզում եմ բոլորին ասել, որ բանտարկյալ Սաակաշվիլին երբեք արտոնյալ չի լինի,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ մի քանի հազար բանտարկյալներ նստած են վրացական բանտերում, որոնք նույնպես խնամքի կարիք ունեն:

- Բանտարկյալ Սաակաշվիլին ոչնչով չի տարբերվում մյուսներից, միայն թե նա շատ ավելի մեծ հանցագործություններ է կատարել մեր երկրի դեմ, քան մյուս բանտարկյալները: Սաակաշվիլին առնվազն վեց տարի բանտում կլինի,- ասաց վարչապետը:

Բանտարկյալի համար արտոնություններ սահմանելու դեմ կտրուկ հայտարարություններով հանդես եկավ նաեւ «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն:

- Իհարկե, ոչ մի բանտարկյալ չպետք է օգտվի առանձնահատուկ արտոնություններից, հատկապես՝ Միխեիլ Սաակաշվիլին, ով առանձնապես ծանր հանցագործություններ է կատարել երկրի, ինչպես նաեւ ժողովրդի, առանձին քաղաքացիների դեմ: Ուստի արտոնությունների մասին խոսելն անհիմն է,- ասաց Իրակլի Կոբախիձեն:



ԷՆԴԵՐՍ ՎԻՄԲՈՒՇ. «ՍԱԱԿԱՇՎԻԼԻՆ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ՉԷ»



Ռադիո «Ազատության» նախկին ղեկավար եւ Ամերիկայի արտաքին քաղաքականության խորհրդի վերլուծաբան Էնդերս Վիմբուշը «Ամերիկայի ձայնի» հետ հարցազրույցում հայտարարեց, որ Միխեիլ Սաակաշվիլին փորձում է իրեն ներկայացնել որպես զոհ, թեեւ նա ո՛չ զոհ է, ո՛չ էլ քաղաքական բանտարկյալ:

- Սաակաշվիլին 2012 թվականից կատարեց իր ընտրությունը, իր ցանկությամբ հրաժարվեց Վրաստանի քաղաքացիությունից եւ ընդունեց այլ երկրի քաղաքացիություն: Նա սկզբում մեկնեց ԱՄՆ, ապա՝ Լեհաստան, Ուկրաինա, Նիդերլանդներ... Հետաքրքիրն այն էր, թե ո՞վ էր ֆինանսավորում նրա ուղեւորությունները, չէ՞ որ դրանք կապված են վիթխարի գումարների հետ: Ի վերջո, վերադարձավ Ուկրաինա եւ Ուկրաինայից Վրաստան մեկնեց իրավիճակի ապակայունացման նպատակով: Ես չեմ համակրում Սաակաշվիլուն: Նա լավ հայրենասեր չէ, նրան Վրաստանի դատարանը ճանաչել է որպես հանցագործ: Նա գիտեր, որ եթե վերադառնար Վրաստան, անմիջապես կձերբակալվեր, թեեւ դրան չէր հավատում: Նրան ձերբակալեցին եւ նոր մեղադրանք ներկայացրին: Չեմ կարծում, որ նա կկարողանա որեւէ բան փոխել, այդ ընտրությունը նա ինքն է կատարել եւ տվյալ պարագայում բնավ զոհ չէ,- հայտարարեց Էնդերս Վիմբուշը:


ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Վրաստանը հերթական անգամ հաղթեց մարդու իրավունքների եվրոպական դատարանում անցկացված դատավարությունը:

Ստրասբուրգի դատարանը հրաժարվեց բավարարել Հարավային Օսեթիայի տարածքում ապրող Ռուսաստանի քաղաքացիների բողոքը Վրաստանի դեմ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում ընդունեց, ըստ որի Վրաստանն իր գործողություններում ապօրինի քայլ չի կատարել: Ինչպես նշված է որոշման մեջ, Վրաստանը զրկվել էր այդ շրջաններում վերահսկողություն կատարելու հնարավորությունից, իսկ այնտեղ տեղի ունեցած իրադարձությունները, դատավորի կարծիքով, զուրկ են դրանք՝ որպես վրացական իրավասության տակ գտնվող միջոցառում որակելուց:

Դատարանն ի նկատի ունեցավ նաեւ այն հանգամանքը, որ Հարավային Օսեթիայի բնակիչների՝ Վրաստանի դեմ բողոքը պաշտպանված էր Ռուսաստանի պաշտոնական իշխանությունների կողմից:



G20

ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՆԵՐՆ ԵՆ

Հոկտեմբերի 30-31-ը Իտալիայի մայրաքաղաք Հռոմում կանցկացվի աշխարհի առաջատար 20 երկրների ղեկավարների G20 գագաթաժողովը: Գագաթաժողովի մասնակիցները կքննարկեն կորոնավիրուսի համավարակով պայմանավորված մարտահրավերները, տնտեսական եւ միջազգային հարաբերությունների նշանակալի հարցերը:

Հռոմում գագաթաժողովի ավարտից հետո, Մեծ Բրիտանիայի Գլազգո քաղաքում, համաշխարհային լիդերների մասնակցությամբ ծրագրվում է ՄԱԿ-ի կլիմայի հարցերով բարձր մակարդակի խորհրդաժողովի անցկացումը:

ՈՒԶԲԵԿՍՏԱՆ

ՇԱՎԿԱԹ ՄԻՐԶԻՅՈԵՎԸ ԿՐԿԻՆ ԸՆՏՐՎԵՑ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ



Հոկտեմբերի 24-ին Ուզբեկստանում անցկացվեցին նախագահական ընտրություններ, որոնց արդյունքներով հաղթել է երկրի գործող նախագահ Շավկաթ Միրզիյոեւը՝ ստանալով ընտրողների ձայների ավելի քան 80 տոկոսը:

Նշենք, որ գործող նախագահից բացի, նախագահի պաշտոնի համար պայքարում էր եւս տարբեր կուսակցություններ ներկայացնող հինգ թեկնածու:

Հիշեցնենք, որ Շավկաթ Միրզիյոեւն իշխանության է եկել Ուզբեկստանում 2016 թ. արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում՝ փոխարինելով Իսլամ Քարիմովին: Այդ ժամանակ Միրզիյոեւը ստացել էր ընտրողների ձայների 88,61 տոկոսը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

2022 ԹՎԱԿԱՆԻ ԾԱԽՍԵՐՆ ԱՎԵԼԱՑՎՈՒՄ ԵՆ

Եվրախորհրդարանի պատգամավորները քվեարկել են Եվրամիության 2022 թվականի բյուջեի նախագծի օգտին՝ դրա ծավալը մեծացնելով մինչեւ 171,8 միլիարդ եվրո:

Խորհրդարանը 2022 թվականի պարտավորությունների հատկացումների ընդհանուր մակարդակը սահմանեց 171,8 միլիարդ եվրոյի չափով, ինչը 2,7 միլիարդ եվրոյով ավելի է բյուջեի այն նախագծի համեմատ, որն առաջարկել է (Եվրոպայի) հանձնաժողովը:

ԹՈՒՐՔԻԱ

10 ԵՐԿՐԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՎՏԱՐՄԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՄՆԱՑ ԱՆԿԱՏԱՐ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը սպառնացել էր երկրից վտարել 10 երկրի՝ ԱՄՆ-ի, Կանադայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, Դանիայի, Գերմանիայի, Նիդերլանդների, Նոր Զելանդիայի, Նորվեգիայի, Շվեդիայի դեսպաններին, որոնք կոչ են արել ազատ արձակել իրավապաշտպան բարերար, ակտիվիստ Օսման Քավալային, որին մեղադրում են 2016 թվականի ռազմական հեղաշրջման փորձին մասնակցության եւ Գյուլենական շարժման հետ կապերի մեջ:

Նշենք, որ դեսպանների վտարման հարցում ԱՄՆ-ի պետդեպարտամենտի, ինչպես նաեւ Եվրամիության կտրուկ բացասական դիրքորոշման պատճառով, Թուրքիայի իշխանությունները հրաժարվեցին դեսպաններին նոն գրանտ հայտարարելու մտադրությունից:

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀՈԲԵԼՅԱՆ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150 ԵՎ ՆՐԱ ԹԻՖԼԻՍ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ 105-ԱՄՅԱԿՆԵՐԸ



Տարին հոբելյանական է, արվեստասեր հասարակայնությունը նշում է հայ դասական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, մանկավարժ ու հասարակական գործիչ, դիրիժոր, կոմպոզիտոր, Հայաստանի ժողովրդական արտիստ Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 150-ամյակը: Արժանահիշատակ տարեդարձը, Հայաստանի, Ռուսաստանի եւ Վրաստանի հայտով, մտել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի տոնական օրագրերի օրակարգում՝ ստանալով միջազգային հնչեղություն:

Արձանագրելով այն, որ այս տարի լրանում է նաեւ Ալ.Սպենդիարյանի Թիֆլիս կատարած առաջին այցելության 105-ամյակը, եւ հոբելյանն ստացավ երկակի տոնակատարության որակ: Անվանի կոմպոզիտորի այցելությունը Թիֆլիս, ծանոթությունը, ընկերությունը, բարեկամությունը վրաց դասական երաժշտության կարկառուն դեմքերի, ընդ որում, վրաց դասական երաժշտության հիմնադիր Զաքարիա Փալիաշվիլու հետ, տարիների ընթացքում խորացավ՝ ստանալով ստեղծագործական համագործակցության բնույթ: Ուստի, Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի, Երեւանի Հովհաննես Թումանյանի թանգարանի նախաձեռնությամբ, մեծ կոմպոզիտորի հոբելյանական ծրագրի քբիլիսյան էջը ստացավ «Ստեղծագործական երկրորդ կյանք. Թիֆլիս» խորագիրը:

Հոբելյանական միջոցառումները կյանքի կոչվեցին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի բարի կամքով ու օրհնությամբ, իրականացվեցին 2021 թվականի հոկտեմբերի 23-24-ը՝ Վիրահայոց թեմի աջակցությամբ, Վրաստանում ՀՀ դեսպանության օժանդակությամբ: «Ստեղծագործական երկրորդ կյանք. Թիֆլիս» խորագրով միջոցառումներին մասնակցում էին Երեւանի Ալ.Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանի գլխավորած պատվիրակության անդամները:



Ալեքսանդր Սպենդիարյանի կյանքի մասին հետաքրքիր եւ բացառիկ փաստերով բանախոսությամբ ելույթ ունեցավ Երեւանի Ալ.Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը: Վերջինս իր ելույթում կարեւորեց կոմպոզիտորի այցելությունը Թբիլիսի, բարեկամությունը հայ եւ վրացի մտավորականների հետ, նրանց միջեւ համագործակցության եզրույթներն ու ստեղծագործական փաստարկներով հագեցած կյանքի էջերը:

Տոնական տրամադրությունը հոկտեմբերի 24-ին շարունակվեց Վիրահայոց թեմի «Հովհ.Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում: Միջոցառմանը ներկա էին եւ ելույթ ունեցան Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը, Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Հովհ.Թումանյանի գիտամշակութային կենտրոնի ղեկավար Գիսանե Հովսեփյանը, Վիրահայոց թեմի մամլո ծառայության ղեկավար Սուսաննա Խաչատրյանը:

Ամենայն Հայոց բանաստեղծի աշխատասենյակում, չորս կառույցների՝ Երեւանի Ալ.Սպենդիարյանի տուն-թանգարանի (ի դեմս՝ Մարինե Օթարյանի), Երեւանի Հովհ.Թումանյանի թանգարանի (ի դեմս՝ Անի Եղիազարյանի) եւ Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի (ի դեմս՝ ղեկավար Գիսանե Հովսեփյանի), «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոնի (ի դեմս՝ ղեկավար Եվգենյա Մարկոսյանի) միջեւ փոխադարձ համագործակցության Հուշագրի ստորագրմամբ:

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՈՒՍԱՆՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

«ՀԻՆ ՎՈԴԵՎԻԼՆԵՐԸ»՝ ՆՈՐ ՇՆՉՈՎ. ԿԵՑՑԵՔ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐ

50 տարուց առաջ, լինելով Ստ.Շահումյանի անվան պետական դրամատիկական թատրոնի սկսնակ դերասան, ինձ բախտ էր վիճակվել մեր բեմահարթակին տեսնել Ք.Բախուտաշվիլու եւ Ա.Ցագարելու «Հին վոդեւիլները» վրաց հանճարեղ ռեժիսոր Վասո Գոձիաշվիլու բեմադրությամբ եւ մեր թատրոնի բազմավաստակ եւ տաղանդավոր դերասան-դերասանուհիների կատարմամբ: Դրանք էին՝ Դորի Ամիրբեկյան, Ռաֆայել Պապովյան, Հրաչյա Սիմոնյան, Ավետիք Սանոսյան, Ռոբերտ Աղաջանյան եւ Ռոբերտ Հովհաննիսյան, Սերիկ Շեկոյան, Վեներա Հակոբյան, Ասյա Ժամկոչյան եւ ուրիշներ: Հաճախ էին հյուրընկալվում մեր թատրոն վրաց թատրոնի մեծ վարպետներ Մեդեա Չախավան, Վասո Գոձիաշվիլին եւ մեծ սեր ու հարգանք էին վայելում մեր հանդիսատեսի կողմից, ինչպես եւ մեր ավագ ընկերները: Մենք՝ երիտասարդ եւ միջին հասակի դերասաններս, մեծ հարգանք եւ հիացմունք էինք տածում մեր ժամանակի կորիֆեյների նկատմամբ եւ շատ ու շատ բաներ ընդօրինակում եւ սովորում նրանցից: Փառք ու պատիվ նրանց... Կեցցեն մեր մեծերը:



Այսօր ես ամենաբախտավոր մարդն եմ, որ նորից ինձ զգացի երջանիկ ու հպարտ, որ մեր երիտասարդ սերունդը՝ հանձինս իրենց մեծաշնորհ ռեժիսոր եւ գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի ու տաղանդավոր ռեժիսոր Լեւոն Ուզունյանի, կարողացան նորից վերհիշել, վերականգնել Վասո Գոձիաշվիլու բեմադրածը եւ մեր սիրելի հանդիսատեսին ներկայացնել «Հին վոդեւիլները»:

Ես անչափ ուրախ եմ, որ մեր երիտասարդները շնորհքով են, աշխատասեր, տաղանդավոր, ունեն ձիրք ու ձգտում, ինչը պետք է ավելի զարգացնել եւ հղկել: Կուզեի նշել նրանցից մի քանիսին՝ Մարիամ Խաչոյան (Սոնա), նա իր գեղեցիկ եւ հմայիչ տեսքով, նրբազգացությամբ, բեմական շարժ ու ձեւով եւ թեթեւ խաղով գրավեց հանդիսատեսի սերն ու հմայքը: Նարեկ Բայանդուրյան (պրիկազչիկ Տիգրան, իսկական պրիկազչիկի տիպար, շատ աշխույժ, ճկուն, անկաշկանդ, թեթեւ, չափի մեջ եւ բեմական շարմով):

Իհարկե, արդեն ավագ սերնդի ու ճանապարհ անցած դերասանս, թերություններ էր գտա, բայց հուսով եմ՝ դրանք ուղղելի, հաղթահարելի են: Օրինակ, այն, ինչում որոշ դերասաններ թերացան, ստացվեց Սերգեյ Սաֆարյանի (դատավոր) մոտ՝ համոզիչ տեսք, բեմական ազատ պահվածք դերին համապատասխան, բեմական լավ խոսք: Գրոտեսկը (կերպարանափոխում) շատ է, որը նկատվում է նաեւ մյուս դերակատարների մոտ: Իհարկե, գրոտեսկը պետք է վոդեւիլում, բայց չափի սահմաններում, չափն անցնելը փչացնում է որակը ու միայն լավ ծիծաղ կորզում հանդիսատեսից... Այսպես, օրինակ, Ալեքս Սաչյան (Սաշա), պետք է շատ աշխատի ձայնի, պլաստիկայի, բեմական շարժման եւ լինի ավելի դինամիկ եւ հանդուգն...

Ընդհանուր առմամբ, բեմադրությունը լավն է, որի համար շնորհակալություն եմ հայտնում թատրոնի գեղարվեստական ղեկավար ու բեմադրող ռեժիսոր Արմեն Բայանդուրյանին եւ իր թիմին հաճելի ու ուրախալի երեկոյի համար, որ պարգեւեցին մեր թատերասեր հանդիսատեսին:

Մեկ ամիս է, որ ես նորից իմ հարազատ Թբիլիսիում եմ: Եվ, իհարկե, չէի կարող չգնալ Պլեխանովի (այժմ՝ Աղմաշենեբելու) փողոցի վրա գտնվող Պատանի հանդիսատեսի թատրոն եւ չդիտել Ք.Բախուտաշվիլու ու Գ.Ցագարելու «Վրացական վոդեւիլները» մեր ադամյանցիների ներկայացմամբ:

Ի սրտե ցանկանում եմ մեր թատերախմբին եւ իրենց ղեկավարին քաջառողջություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ եւ նոր հանդիպում մեր նորակառույց թատրոնի շենքում: Հուսով եմ՝ շուտով:

ՊԱՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոնի 1971-1995 թթ. դերասան

Իսրայելի քաղաքացի

ԱՆԱՀԻՏ ՍՏԵԼՄԱՇՈՎԱՅԻ ԵԼՈՒՅԹԸ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ



Թբիլիսիի պետական կոնսերվատորիայում անցկացվեց Թենգիզ Ամիրեջիբու անվան ութերորդ միջազգային երաժշտական փառատոնի հաղթող Անահիտ Ստելմաշովայի համերգը:

Ծնունդով ախալքալաքցի, 14-ամյա Անահիտ Ստելմաշովան, որը ներկայումս սովորում է Թբիլիսիի է.Միքելաձեի անվան կենտրոնական երաժշտական դպրոցում (պրոֆեսոր Նինո Քաթամաձեի դասարանում), հաղթող ճանաչվեց Թենգիզ Ամիրեջիբու անվան միջազգային 8-րդ փառատոնում:

Նշենք, որ Անահիտը, ով 6 տարեկանից սկսել է ի երաժշտական կրթությունը, մի շարք միջազգային մրցույթների հաղթող է ճանաչվել: Որպես երաժիշտ՝ Անահիտ Ստելմաշովայի ձեւավորման գործում նշանակալից ավանդ են ներդրել էլիսո Բոլքվաձեն եւ Միշել Սոնիմը: Անահիտը Վրաստանի «Քնար», ֆրանսիական SOS Talents եւ Կանադայի հայկական «Աթկեն» հիմնադրամների կրթաթոշակառու է:

Ունկնդիրների խնդրանքով, Անահիտ Ստելմաշովան բուռն ծափահարությունների ներքո կատարեց Վերշավինի «Օպուսը»:

ՌԵՎԱԶ ԹՈՓՈՒՐԻԱ

ՍՅՈՒԺԵ՝ «ՇՐՋԱՆՑԻԿ ՆՐԲԱՆՑՔԻ» ՄԱՍԻՆ

Հոկտեմբերի 24-ին ռուսական «РТР Планета» հեռուստաընկերությունը նորությունների հաղորդաշարում հեռուստադիտողին ներկայացրեց սյուժե Թբիլիսիից, որտեղ պատմում է տեղական ռուսալեզու «Շրջանցիկ նրբանցք» (ղեկ.՝ Արտեմ Կիրակոզով) թատրոնի մասին:

ԹԻՆԱԹԻՆ ՃԵԴԻԱ

ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՅՍՕՐ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, 5 ԻՆՔՆԱՎԱՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՎ 15 ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նշենք, որ քաղաքապետերի ընտրության երկրորդ փուլին ներկայացված են «Միասնական ազգային շարժում», «Գախարիա-Հանուն Վրաստանի», «Թամազ Միչիաուրիհ՝ միասնական Վրաստանի համար» եւ «Վրացական երազանք» ընտրական սուբյեկտների թեկնածուներն ու մեկ անկախ թեկնածու: Իսկ ինչ վերաբերում է մեծամասնական համակարգով ընտրությունների երկրորդ փուլին, մասնակցում են «Վաղաժամկետ ընտրություն-միասնական Վրաստան-Ժողովրդավարական շարժում», «Միասնական ազգային շարժում», «Լելո», «Եվրոպական սոցիալիստներ», «Գախարիա-Հանուն Վրաստանի», «Ազատ Վրաստան», «Թամազ Միչիաուրին միասնական Վրաստանի համար», «Վրացական երազանք», «Ջուրաբ Գիրչի-Ջափարիձե», «Գիրչի՝ Ավելի շատ ազատություն» ընտրական սուբյեկտները եւ մեկ անկախ պատգամավոր:

ԲԱԶՄԱՀԱԶԱՐԱՆՈՑ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կալաձեն եւ Նինո Լացաբիձեն:

- Մեր երկրի հազարավոր քաղաքացիներ հավաքվել են եւս մեկ անգամ արտահայտելու, թե ինչպիսին է մեր ժողովրդի ուժը, որը պայքարում է վերջնականապես հաղթել չարին, պաշտպանել արժանապատվությունն ու ազատությունը, հանուն մեր երկրի առաջընթացի եւ զարգացման: Հոկտեմբերի 2-ին մեզ վստահում էր ընտրողների 47 տոկոսը, փաստացի յուրաքանչյուր երկրորդ ընտրողը, ինչը մեզ նոր լիցք ու պատասխանատվություն է տալիս առաջիկա երեք տարիների ընթացքում հոգալ մեր երկրի ու ժողովրդի բարօրության մասին: Այս հաղթանակը ավարտին պետք է հասցնել հոկտեմբերի 30-ին,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Նախընտրական ամփոփիչ հանրահավաքին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին շնորհակալություն հայտնեց ընտրողներին ընտրությունների առաջին փուլում ցուցաբերած աջակցության համար եւ հույս հայտնեց, որ հոկտեմբերի 30-ին, ընտրությունների երկրորդ փուլում ընտրողները «Վրացական երազանքին» իրենց ցուցաբերած աջակցությամբ հնարավորություն կտան հաղթանակը հասցնել իր տրամաբանական ավարտին:

- Նախ ուզում եմ իմ ելույթն սկսել անկեղծ երախտագիտությամբ: Շատ շնորհակալ եմ ձեր հավատարմության, վստահության, նվիրումի, պայքարի, շնորհակալ եմ այսօր այստեղ գալու համար: 2012 թվականին մեր կուսակցության հիմնադիր Բիձինա Իվանիշվիլու գլխավորությամբ այս երկրի շարքային զինվորները խաղաղ կերպով զինաթափեցին ավտորիտար, ճնշող ռեժիմը եւ իշխանությունից հեռացրին մարդասպանների, դահիճների ու դավաճանների կուսակցությունը, հակապետական, ապազգային եւ հակաեկեղեցական ուժը:

Մենք հաստատել ենք այն արժեքները, որոնցով կառավարվում է ողջ երկիրը մինչ օրս: Մենք այն իշխանությունն ենք, որը կարողացել է ամենաերկար խաղաղությունն ու կայունությունն ապահովել անկախ Վրաստանի պատմության մեջ: Մենք հիմք ենք ստեղծել կրթության, ենթակառուցվածքների, գյուղատնտեսության եւ տնտեսության ոլորտներում հիմնարար բարեփոխումների համար: Առաջընթացը շոշափելի է բոլոր ոլորտներում՝ թե' ներսում, թե' արտաքին բոլոր ուղղություններով,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին եւ համոզմունք հայտնեց, որ համատեղ ջանքերով կհաղթահարվեն բոլոր խնդիրները:

- Վստահ եմ եւ հավատացած, որ գալիք տարիները լինելու են վերակառուցման, խաղաղության ու կայունության, միավորման տարիներ: Իմ մեծ ցանկությունն է վերջ տալ հակասություններին եւ միավորվել: Եկեք համախմբվենք այնպես, ինչպես մեզ սովորեցնում է մեր ազգային գանձ ու մեր մշակույթի հպարտություն հանդիսացող եւ, մեր նախնիների ստեղծած վրացական բազմաձայնությունը: Մենք անպայման միասին կհաղթենք, Թբիլիսին կհաղթի, Զուգդիդին կհաղթի, Քութայիսին կհաղթի, Բաթումին կհաղթի, Օզուրգեթին կհաղթի, Ռուսթավին կհաղթի, Փոթին կհաղթի, Թելավին կհաղթի, կհաղթի Թիանեթին, կհաղթի Քարելին, կհաղթի Խաշուրին, Ցագերին կհաղթի, Խոբին կհաղթի, Ծալենջիխան կհաղթի, Չխորոծողուն կհաղթի, կհաղթի Խելվաչաուրին, կհաղթի Վրաստանը, Աստված մեզ պահապան,- ասաց վարչապետը:



Հանրահավաքին մասնակից ախալքալաքցիները

ԿՈԱԼԻՑԻԱ՞՝ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ. ՕԳՈՒՏՆԵՐՆ ՈՒ ՌԻՍԿԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, այսօր՝ հոկտեմբերի 30-ին, հինգ ինքնակառավարման քաղաքներում եւ 15 մունիցիպալիտետներում կանցկացվի քաղաքապետերի ընտրության երկրորդ փուլը: Դրանց արդյունքներով էլ կսահմանվեն, թե կառավարման ինչ համակարգեր կգործեն այդ մունիցիպալիտետներում ու ինքնակառավարման քաղաքներում, եւ ինչ արձագանք կունենա քաղաքացիների ընտրությունը:

Ընթերցողներին հիշեցնենք, որ Թբիլիսիի քաղաքապետի ընդդիմադիր թեկնածու Նիկա Մելիան ներկայացրեց մայրաքաղաքի այլընտրանքային՝ վեց կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված «ստվերային» կառավարությունը: Նույն մեխանիզմն է առաջարկվում նաեւ ինքնակառավարման մյուս քաղաքներում եւ մունիցիպալիտետներում: Իսկ ինչ վերաբերում է կառավարող թիմին, ապա «Վրացական երազանքը» նշեց, որ հոկտեմբերի 2-ի ընտրությունների արդյունքներով, մասնավորապես, Թբիլիսիի սակրեբուլոյում կառավարող թիմն ունի մեծամասնություն եւ Նիկա Մելիային կադրային փոփոխություններ իրականացնելու հնարավորություն չի ընձեռի: Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու համոզմամբ, նորմալ երկրում նման կոալիցիայի ձեւակերպումը հնարավոր չէ, եւ յուրաքանչյուր քաղաքապետ, առանց կենտրոնական իշխանության աջակցության, ոչինչ չի կարող ձեռնարկել:



Ստեղծված իրավիճակի մեկնաբանման հարցով դիմեցինք ինքնակառավարման հարցերի փորձագետ **Իրակլի Մելաշվիլուն**:

Ինչպես նշեց փորձագետը, ինքնակառավարումն իշխանության անկախ մարմին է: Սահմանադրության համաձայն, այն հիմնվում է երկրի սուբսիդավորման սկզբունքի վրա եւ, հետեւաբար, վարչապետից ձեւականորեն ոչ մի կախվածություն չկա, թե նախագծերի իրականացման համար այն կստանա՞ արդյոք ֆինանսական աջակցություն:

- Այդ գումարների բաշխումն իրականացվում է որոշակի բանաձեւերով, որը մշակվել է ֆինանսների նախարարության կողմից: Չեմ կարծում, որ ինչ-որ ուժեր կարողանան դրան միջամտել, քանի որ դա մեծ իրարանցում կառաջացնի: Չնայած, որ Վրաստանում ապակենտրոնացում չի իրականացվել, բոլոր դեպքերում, վերոնշյալ բանաձեւով մունիցիպալիտետները պետք է ստանան որոշակի գումարներ, հակառակ դեպքում, դա օրենքի, սահմանադրության խախտում է եւ կարող է վերածվել դատական քննարկման առարկայի,- նշեց Իրակլի Մելաշվիլին: Վերլուծաբանն ընդգծեց սակրեբուլոներին վերապահվող նշանակալից իրավունքը. եթե կառավարության նորմատիվ ակտերից որեւէ մեկը հակադրվում է Վրաստանի սահմանադրության այն բաժնին, որը վերաբերում է ինքնակառավարման երաշխավորված իրավունքներին, ապա վերջինս կարող է դիմել Սահմանադրական դատարանին:

- Նման իրավունքներից մեկը սուբսիդավորման սկզբունքն է: Եթե դա կառավարության որոշմամբ խախտվի, ապա կդառնա դատական քննարկման առարկա,- հայտարարեց Մելաշվիլին եւ հիշատակեց 1998 թվականի իրադարձությունները, որոնք հանգեցրին սոցիալական պայթյունի:

- 1998 թվականին, երբ Վրաստանում անցկացվեցին առաջին տեղական ընտրությունները, ֆինանսների նախարարությունը փորձեց դիմել այդ միջոցին եւ ֆինանսական միջոցներ հատկացնել միայն իր թիմի անդամներին, ինչը երկրում հանգեցրեց սոցիալական պայթյունի,- ասաց փորձագետը:

ԻՆՉ Է ԱՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՂԹԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Տեղական ընտրություններում հաղթելուց հետո, քաղաքապետը սակրեբուլոյի հաստատմանը պետք է ներկայացնի քաղաքապետարանի կառուցվածքը, փոխքաղաքապետերին եւ ծառայությունների ղեկավարներին: Եթե սակրեբուլոն ներկայացված թեկնածուներին չհաստատի, ապա տասն օր անց, նույն ընթացակարգը կրկնվելու է: Եթե այդ անգամ էլ սակրեբուլոն մերժի հաստատել ներկայացված թեկնածուներին, ապա երեք ամսվա ժամկետով նշանակվում է քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարը: Այդ ժամկետի սպառումից հետո, վերոնշյալ ընթացակարգերը կրկնվում են եւ, եթե այս անգամ էլ քաղաքապետին չի հաջողվում համոզել սակրեբուլոյի անդամներին պաշտպանել իր կողմից առաջադրած թեկնածուներին, ապա քաղաքապետին տրվում է թեկնածուների փոփոխության իրավունք: Վերոնշյալ մեխանիզմը հնարավոր է կիրարկել մինչեւ ընտրական ժամանակահատվածի սպառումը, թեպետ տվյալ պարագայում նշանակալից է դառնում քաղաքի բյուջեի թեման: Եթե սակրեբուլոն երեք ամսվա ընթացքում չհաստատի քաղաքապետի կողմից ներկայացված բյուջետային նախագիծը, ապա Վրաստանի կառավարությունն ու երկրի խորհրդարանը իրավասու են դիմել նախագահին: Նման պայմաններում նախագահին իրավունք է վերապահվում ներդնել անմիջական, ուղղակի կառավարում, ցրել սակրեբուլոն, պաշտոնանկ անել քաղաքապետին եւ նշանակել այդ կոնկրետ մունիցիպալիտետում նոր ընտրություններ:

- Համոզված չեմ, որ դա սակրեբուլոյի, կառավարող թիմի կամ ընդդիմության համար ցանկալի իրավիճակ է,- նշեց փորձագետը:

ՈՐՔԱՆՈՎ Է ԻՐԱՏԵՍԱԿԱՆ ԿՈԱԼԻՑԻԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ

Փորձագետ Իրակլի Մելաշվիլու գնահատմամբ, երկրին կընձեռվի այս անգամ ինքնակառավարման մարմնի մակարդակով ավարտել կառավարման 30-ամյա իրեն չարդարացրած պրակտիկան, երբ ընտրություններում հաղթանակած թիմը զբաղեցնում է գործառնության բոլոր դիրքերը, իսկ ընդդիմությանը զրկում քաղաքական բոլոր լծակներից՝ թողնելով միայն փողոցում ցույցերի անցկացման հնարավորությունը, որի արդյունքում կրկին իրարանցում է առաջանում: Ինքնակառավարման մարմնում կոալիցիայի հաստատումը թույլ կտա անցնել կառավարման եվրոպական մոդելի, երբ սակրեբուլոյում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները, ելնելով ընտրությունների արդյունքներից, միմյանց միջեւ բաժանում են պատասխանատվությունը, պաշտոնները եւ համագործակցությամբ շարունակում աշխատանքը:

- 2021 թվականի տեղական ինքնակառավարման ընտրությունների արդյունքները հնարավորություն են ընձեռում անցնել նոր, առավել քաղաքակիրթ կառավարման մեթոդին, երբ կուսակցությունները, ընտրություններին ստացած ձայներից ելնելով, ստանձնում են պատասխանատվություն եւ, միմյանց քննադատելու փոխարեն, աստիճանաբար անցնում համագործակցության: Ծագում է նաեւ մրցակցություն, քանի որ սակրեբուլոյում տարբեր ուղղություններ են ներգրավվում: Մրցակցություն է ծագում, թե ով ավելի լավ կկատարի աշխատանքը: Հաստակեցվում է նաեւ վերահսկողության մեխանիզմ, վերահսկողություն է սահմանվում բյուջետային ծախսերի, կոռուպցիայի կանխման ուղղություններով: Ընտրողները եւս իրենց հերթին, ստանում են իրատեսական հնարավորություն, ելնելով այս կամ այն կուսակցության աշխատանքի կոնկրետ արդյունքներից,- հայտարարեց փորձագետը եւ հավելեց, որ ընդդիմությունն այսօր ունի Թբիլիսիում, Բաթումիում, Զուգդիդիում, Ռուսթավիում, Քութայիսիում ստեղծել քաղաքական նոր իրավիճակ եւ ցուցադրել, թե ինչպես կարելի է, օրինակ, հավասարապես բաշխել իշխանությունը: Իսկ ինչ վերաբերում է ինքնակառավարման մարմնում կոալիցիայի ստեղծման հնարավոր ռիսկերին, ապա փորձագետի համոզմամբ, դա պայմանավորված է սակրեբուլոյում գործող քաղաքական սուբյեկտների համագործակցության պատրաստակամության մակարդակից: Եթե նման պատրաստակամություն չկա, ապա անընդմեջ ճգնաժամերը կհաջորդեն միմյանց,- հայտարարեց Իրակլի Մելաշվիլին:

Էջը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ